

ԽԱՅԻՔԱԿԱ

ՅԵՐԱՅՈՒՅԻ
ՅՈՑԳՈՐԴՈՅԵՑ

Գիճկն է 10 կ. Գառառներու՛՛ 12 կ. 1911, Շաբաթ, ՄԱՅԻՍԻ 7 -ին. Թիֆլիս. №19.

ԳՈՒԶԿՈՎԸ ՀՅՈՒՍԻՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ



Կարծանք միտքի զմեզի մտածման ի միջոց ինքնարժանացումը

Հարեան, ես այստեղ հեան կրդնեմ. եւ գլխաւորապէս կրհսկեմ, որ ժանտախար մեր սահմանով չանցնէ: Դուք էլ ձեր հարց տեսէք, որ մեր խայերը ձեր հողը չաննէ:

ԱՐՏ.Շ.ԵՄԻՒՅԵԱ

Շ Ա Ր Ո Ւ Ն Ա Կ Ի Ո Ւ Մ Է Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն 1911

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



Երզիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի լոյս է տեսնում ամեն շաբաթ անխափան Պաշտօնական օրդան պետական, աղբային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, ախտանի և անպիտան, փրկիչ և զլիխիչ, անկեղծ և կեղծաւոր գործիչ-կորզիչների և խայտառակիչների: Անըրածեշտ թերթ բոլոր ընտանիքների համար: «ԽԱՔԱԲԱԼԱ» շաբաթըն ծիծաղեցնում և լացացնում է, շատերին էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հետ ոչ բարեկամ է և ոչ թշնամի: Խմբազրին կարելի է տեսնել, երբ քէֆներդ ուզի:

«ԽԱՔԱԲԱԼԱ» ԲՇԾՆԵՒԻՆՆ Է

Տարեկան	5 ռ.
Կէս տարին	3 »
Նրեր ամիսը	1 » 50 կ.
Ամիսը	— 50 »
Թիֆլիսում տարեկ.	4 » —

«ԽԱՔԱԲԱԼԱ»-ի բաժանորդները կարող են ստանալ «ՍՈՒՐՉԱՆ-ԴԱԿ» օրաթերթը պակաս վճարով, երկուսին միասին փոխանակ 15 ռ.

Տարեկան	12 ռ.	Նրեր ամիսը	3 » 50 կ.
Կէս տարին	6 »	Մէկ ամիսը	1 » 20 »

100 տարով բաժանորդագրելու ցանկացողին 75% զեղչ:

Ձրի կարդացողներին պէտք է նկարենք գլխիկայր:

Հասցէն՝ Тифлисъ Редакция „ХАТАБАЛА“
 Արտասահմանից՝ Tiflis Caucas redaction «Khatabala»
 Խմբագիր-հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ.

«ԽԱՔԱԲԱԼԱ» ՕՐԱՑՈՅՑ

1911 Մ Ա Յ Ի Ս 31 օր

Судьба ԶԱՐԱԲ ԹՅՅՅՅՅ

Լուսնի 23

8 (կեր.) Տօն սրբոյն լուսանկարչի Լէօնի, որ ի մէջ աղօղակային ցուցանէ մեծադիր գեղեցիկ պատկերաւ, բայց երբ զակաղ է վերցնում, մատուցանէ զփթած կօմքօստօն կամ փշաջած ճարխան:

9 (բ.շ.) Տօն սրբոյն «Մաթարայի», որ որպէս բարեկամ ազգին հայոց, մուքթա ներկէ և նկարէ անձանց, որք կամենան տեսնել պատկերս իւրեանց ի մէջ հալիլայի:

10 (գ.շ.) Տարեդարձ մահւան սրբոյն «Կայծեր»-ի, որ ծնաւ յուրաքուժին մեր և հանգեաւ անդառնալի կերպով ի տխրութիւն հօրն իւր Գարեգինի:

11 (դ.շ.) Տօն սրբոյն Գեօգալ Աղաբալիի, որ նահատակեցաւ ի մէջ Շամախի քաղաքին՝ ձեռամբ զաչազանցող կանանց:

12 (ե.շ.) Յիշատակ անբարեմտեան «Նորիդոն»-ի խմբագրատան, որ «Ընկեր» խոստացեալ է կատարել յառաջիկայ աշնանէն:

13 (ուրբ.) Օրն պաւ է. վարդապետ մի ձրւածեղ եփելիս ձեռն այրեցի. ախալցիացիք ըստ սովորութեան թաթարբարակի և պոչաւոր ապուր եփեցնին:

Աստղագէտ—տօմարագէտ և օրացոյցագէտ Փարեմուզ

ՊԱՆՊԱՆՊԱՆՊԱՆՊԱՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

I

«Հրամայում ենք...»

Տրիկն Գեօգալ Աղաբալի (Որ ի Բազու)

Չաւէն հայր սուրբն խնդրէ ի մէջ գի եւ զնա ընդունեսցում ի շարս մերս խաթաբալայականաց. եւ այդ ցուցանէ եւ գործով իւրով:

Սիւնօղն ս. Էջմիածնի հրամայէ նմա բողնել զԲագուն եւ զնալ ի Շուքի, իսկ նորա այնեղ նստեալ—բանի տեղ ոչ ղնէ պատերի արեւաց հրամայողաց:

Ժողովուրդն Շուքի մայրաքաղաքին էլ մնաց անէր անսիրական եւ զբողոքս բազումս առաքէ առ սեգ:

Արդ՝ քաթառացեալ քոյր մեր, Գեօգալ Աղաբալի, այսու պատեր սամմ անգ երթալ եւ համոզել զքեր Չաւէն վարդապետի կամ զհրամանն Սիւնօղի կասարէ եւ կամ մտանէ ընդ դրօշն մերս կուսակցութեան:

Ի հակառակ դէպս անգ յանդիմանելոց եմք:

II

Կլան Յակոբի (Երևան)

Բարձրացորցանեմք ըզեզ ի հեծանս

Երկրորդ էսածի եւ պատեր սամմ զկասարմանէ վաղվաղակի յայտնել մեզ:

III

Տմբլաչի Խաչանին (որտեղ որ լինի)

Սիւրեցեալ սեր, Տմբլաչ զի՞ եւ է՞ր ոչ դորդայ,—սի՞թէ Էջմիածինն այնչափ ի վերայ անք եւս ազդեաց, որ որպէս միաբանին, դուք եւս շնորհագուրկ եղաք:

IV

Ստեփանոս Մալխասեանց (տեսուչ Յովնանեան դպրոցի)

Հաստատ եւ պիտոյակ աղբիւրներից որոնք բոլորում են գառնանն եւ մի քիչ էլ անախառն են լինում—լսեցի որ դուք, գրաբարագէտ պարոնս, ուզեցել էք գրաբարով սպանել խնամքիդ յանձնած աշակերտուհիներին:

Այդ յանցանքի համար դու պատրժում ես համաձայն 387568538 յոդւածի փոխադրութեան դոկտոր Սեդրակ Թառայեանի պատժագրի 38-րդ հատրի 1868 յաւելածի. ուսի եւնարկում էք, եթէ ոչ բոլորովին, զոնէ ամարային արձակուրդի. եւս առաւել այն պատճառով, որովհետեւ դու ներսիւսեան դպրոցում ոչինչ չես սովորեցրել գրաբարից սաներիդ, իսկ սանուհիների հոգին հանում ե՞ս:

ՃՅՅԱՌԴ

V

Սեղրաք Մանդինեանին

Յովհաննէս Մալխասեանը, ինչպէս ասի դասագիրք «Երազար» կրկազմէ, բացառեցէ խնդրեմ՝ այդ Երազարի մի քանիսը էլ դուք կուտէք:

VI

ՏԱԼԻՍ ԵՆՔ ՇՔԱՆՇԱՆՆԵՐ

Վզեցը կատարու ըսյց շնորհելու պայմանով՝

1. Պարոն Յակոբ Գեներեանին.
2. Արեակ Յարութիւնեանին,
3. Մարգար Աւետիսեանին (որան ես մի դուրսի (սնդուկ) քի նամար):

Իր սակութար աշ ձեռքով գրեց ու մէնդաներն էլ բախշեց, շնորհքերը տւեց Բարեցակամ՝

Գասպար աղա Կալատուզով

Աթոռանիստ ու թագթերով զուգամ թագթն մեր՝ Թիֆլիզ 7-ն մայիսի 1911 թ. և մեր խաթարութեան վեցերորդ տարին

ՀԱՌԻՑ ԱՍԻ ԳՈՐԶԵՐԸ

Ասում ին, միթո՞ւ թէ մողան էլ էնինց ցաւ է, վունց վուր կարմրուկ, քուլթէշ, խօլեր, հարինք, ծաղիկ ու ուրիշները:

Ասում ին մօղնի հիւնդուլթիններ էլ կան:

Վերջէրս էլ անձնասպանութիւն է մողա նընգի:

Աւելի շուտք խումբագրապետութիւնը մողա էր, ու էտու համա էլ միր մէշ մէ վուխտ (հիմի էլ էտինց է) խմբագրապետներ ու խումբագիրներ ու վրօ շատ կէին քանց թէ կարթացողներ:

Խմբագրութիւններով բռնաձեռք գիղիք թէ վունց ին տաքացնում ու դողացնում:

Միր ողորմած կառավարութիւնը իմ վուր տեհնում է, վուր խումբագրները շատ ին դողացնում ան շատ տաքացնում գրանց էնչախնէթ խագնի հաշուով դաշաներ է զրգում, խանդիսխան էլ մէ էրկու օրով, շաքթով թէ տարով. միր սուկի Վարդան Մամիկոնովի աղջկայ՝ Շուշանիկի ժամի մօտ իստակ օթ է կուլ ալ տալի:

Քաի հով:

Դէմուղէմիցն էլ՝ Բատանիցի վարթերի ու Դարբասնի լացքի օթ:

Ասի վուր մէ վուխտ խմբագրութիւններ ու վրօ կէին, քանց թէ կարթացողներ, հիմի էլ անձնասպանիքը շատացիլ ին քանց թու դրանց թաղողները:

Վունց վուր աղաք, տեղից վիկացողը խումբագիր էր դառնում, էտինց էլ հիմի՝ ամեն մի մարթ՝ մինձ թու պրատիկ, աղջիկ թէ տղայ, գլխասպան (անձնասպան) ին ըլում:

Հալթաթտա էտի էլ մի սիրունութիւն, մի լագաթին բան ին գթնում:

Խասխաթ է:

Իմ օրօքս, վունց վուր իստակ ու թաւանկար հայ, իս էլ էն մէկէլ հիւնդուլթիններէմէն բռնուիլ իմ.—կարմրուկ, քուլթէշ, խօլէր (օխտ-ուլթ ջէր) ծաղիկ, հարինք ու խմբագրութիւնի ցաւերիմէն տեհիլ, փորցիլ իմ:

Համա խմբագրութիւնի ցաւերէմէն դժար՝ հիւնդուլթին ջէր չիմ քաշի:

էլի փառք Աստու, ջէր էսօր էլ կիւթանի իմ, ու իմանում իմ էլ, վուր չիմ մեռի:

Ղուրթ է, դուրթ է՝ անդերձ կի գրբիլ իմ:

Հիմի անդերձներու բանը վունց պիտի ըլի. ախպէր, աթմորթին անդերձ է գրում, իր կամքը այդնում է՝ Փիլիպուզին էսողամ է տալի, Կիրակոսին էսողամ, էստի պարզ ու իստակ հաշիւ է:

Համա տիս, վուր հայի սիւ նախանձը էստի էլ գուլթը վիր է բարձրացնում:

էն օրը, մեռնողներից մինը, Ամբարձում Առաքելովի համա կուքօ էր անդերձ արի. էտ բանը վուր լսում ին «Հորիգոնի» խմբագրութիւնում գնում ին ու իրիճ մեռնողի ձեռիցը անդերձը խլում ին, պատուում, միզ համա ինչի չիս գրի, կօսէ, ու էն մարթը ջգրու հիմի էլ չէ մեռնում:

—Ջէր կիւթանի վախտով, վուր անդերձս քանդիլ իք տալի, կօսէ, վուր մեռնիմ ո՞վ գիղա ինչէր անէք, կօսէ:

Ասիլ էր էս մարթը:

Պրաւա էլ ունէ:

Մարթը կուքօ է անդերձ անում. էն էլ չին դիմիշում:

Հայու խասխաթ:

Հիմի էն անդերձ գրող մարթը, վուր էլ չմեռնի ջգրու ու վիկենայ չխմբագրութիւն մօզոնի, խումբագիր դառնայ,

պիտին ասի թէ՛ էսէնց ու էնէնց:

Մաշ նա պրաւա չուլիցի: ՄԻՅ ԵՅ ԵՅ ՈՒՆԷ:

Մէ կուքօ, էն էլ չին թողնում:

էս ջէր ինտիկիւնները. էն մէկէլները ինչ կուլին. դէդի ծրծիր դուն բարեխօս ըլիս: Աթմորթու մեռնելուց եղը նասլէդնիկները էնթաւուր կլեաուգի բաներ ին գթնում անդերձում, վուր վուլինչ էլ չիս կանում անի—անդերձը մողա ին անում:

Դուրի մողա ըլիլը իմացիլ էի, անդերձինը չէի տեհի, չէի լսի:

Հիմի էտունք էլ ըլում է:

Ակոփ Գինջովը, վուր ուրիշը շատիմ, իմ մեռնելուց եղ, ով գիղա մէ սհաթ էլ դիւջ չկենայ, չալիշ գուքայ անդերձս քանդիլ կուտայ՝ էն անդերձը, վուր գրել էի նօտարուզ Մղէբրովի մօղ, Մոսկով գնալուց առաջ ու նօտարուզի պամոշնիկներն էլ նեղացել էին, «Кавказ» գազէթումն էլ թուղթ էին գրգիթէ՝ «Գասպար Կալատուզովի անդերձը ջէր չիմ գրի, կօսէ, Գասպար Կալատուզովը միլիօններ չուկէ, կօսէ»:

Իժում իս ասի, վուր ունիմ, ասի. այ շարտա մարթիք:

Վուր էտ բանը ասէի, խօ էլ հանգիստ չէին տայ:

Ջէր Սատիսովը ո՞վ գիղէ, էնդդամ ճառիր ասիր, վուր իմ միլիօններս էլ նրա ճառերի հանգի շուշխունաներ դառնար:

Ստամբուլի էպիսկոպոսներն էլ ճառիր ասիլ գիղին:


Աշոտ Աթմաստովը կի մինձ-մինձ բռնիլու միջ ու վրօ շուք ունէ. սրան էլ Աստուձ կիւք տայ, խերով մարթ է, ջէր մուշտին կու շանց տայ—իժում ձէնը կու կտրէ:

Սովորութք է, վուր անդերձից եղով մեռնում ին. իս չիմ մեռնում—

Մինչկիլ Գրիքոր Չախտուշովը մէ աղօթք էլ իմ համա չի գրի ու աշկիրտներուն չի տայ, վուր սովորին:

էտ աղօթքի մէջ կուլի գրած՝—


«Ամենաբարի Աստուձ, վուր ասկին Գասպար աղա Կալատուզովի հանգի մինձ մարդը շնոխքեցիր, նրան տալանտ ու կարողութիւն տուր, ու էտ կարողութիւնցը՝ (միլիօններիցը) նա մեզ անդերձով շատ բան խոստացաւ, Գն, նրան, Տէր Աստուձ իրգար կիւք ու ջանասղութիւն տու՛—չունքի և փառք... ամէն»:



ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐ

—Մի վախեր, ես էստեղ իմ յիստն
 մտեմք էլ որ տոյ զս հայրը ինձ—զու
 արդէն քոխած կըլինես:

Չարոն տեսուչ, ես այս աշակերտի
 համար ըստըզինն վկայում եմ. երկու
 տարի է իմ տանն է աղբում և ամսա-
 թղթակները լսի. են տալիս—այս ունեմ
 հնգեր կընշանակէր:





ներքի մի քանի փոշոններ:

Անուշաբոյր ջրերի, օճառի, ճենճի ու խոնաւութեան միախառնուած ծանր ու ժանտ հոտից գարշում է ինքը՝ նոյն իսկ այդ գերեզման-նկուղի գաղտնայող տիրուհին և շարունակ դէպի դուրս ձգտող իր յանդուգն ու խոռվկան շնիկը, իր միակ չարածճի բարեկամը (թէ բարեկամուհին չգիտեմ), որի փոքրիկ ու աշխոյժ աչիկները ու կարմիր դնչիկը հետ, խիստ յարմարուած են երկար ու կախ ականջները, խուզած, նազիկ օտտիկներն ու կարմիր ժապաւինէ վզնոցը:

AM-ը երեկոյեան ժամը հինգին քնից զարթելով (ցերեկին նա կոչուած է—դերգիշեր, իսկ գիշերին—սև ցերեկ) ալօթելով ու աւարտելով վարսերը գանգրելու տաժանական գործը, հիմա պատրաստ է արդէն դիմաւորելու տանջալի ու հողեմաշ գիշերին—իր սև-ցերեկին:

Եւ ահա, պարկած նա օթոցի վրայ, ապուշ հայեացքները անթարթ սևեռած դիմացի ցուրտ, խոնաւ պատին, ծանօթ դէմքեր է պատկերացնում աղտոտ ու պատառոտուն.—համարեա թաց պատառների խայտաբղէտ ծաղկանկարների մէջ:

Նրա շուրջը՝ մունջ է ու ամայի, թէև այնքան էլ ծանր չի թուում նրան իր կեանքի տաղտուկ միօրինակութիւնը. նրա ալեկոծ, վեր ու վար անող լանջի տակ—յուսախաբուութեան ու հիասթափութեան մի հանելուկ անցեալ է թաղուած, մի ամբողջ աշխարհ—կսկծող սրտի անվերջ արցունքով ողողուած: Նրա աչքերը՝ վաղուց արդէն դադարել են լալուց, տեղի տալով ակամայ ցինիզմին ու հոգեկան ապշութեանը:

Դուրսը՝ ետում է իսկական կեանքը: Դուրսը՝ ծիծաղում են անսխալ կանայք...

Եւ այդ կեանքն ու ծիծաղը, անարգում են նրա հայեացքներն ու լսողութիւնը, որովհետև նա մերժուած ու հալածուած է ամենքից, որովհետև դառն ապաշաւի ու նախանձի այդ օրերին, նա ամենավայրենի զրկանքներով ու ամենախայտառակ զոհողութեամբ է դրամ վաստակում իր գերագոյն կարօտի—իր վերածնութեան համար:

Նրա մէջ դեռ ևս կան շատ ազնիւ հակուսներ:

Նա կարողանում է նոյն իսկ ալօթել իր՝ տակաւին սիրելի դահճի համար—

—Սուրբ Աստուածածին—մրմնջում է անձկացած—թող այնուամենայնիւ երջանիկ լինի նա, թէև հրեց ինձ անդարձ կորստի ճահիճը...

Մարիկ



ԳՐԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

Թիֆլիսի կոնսիստորիայի բազմաշարձար Պետոն արձակել է պաշտօնից: Ներկայիս նա՝ հայ ակնաւոր գրագէտներից մի խումբ է կազմում, որոնք մտադիր են ամենօրեայ մի թերթ հրատարակել «Կոնսիստոր» անունով. սրանց նպատակն է պաշտպանել երէցփոխների և զանազան կառավարիչների շահերը շահադորձող ժողովրդեան դէմ:

րիկնդանին բախտը կըբացւի, մարդ կայ՝ մեծ պասին, իմ բաղդս պասին է բացել. ինձ ամուսնանալու պայմանով, պարոն Սարսաղեանը առաջարկութիւն արեց, ես, ինչպէս ընդունուած է օրիորդների մէջ, առաջին անգամ համաձայնութիւն չտուի և սպասեցի, որ երկրորդ, երրորդ անգամը առաջարկէ, սակայն իմ սիրեցեալ պարոն Սարսաղեանցը սարսաղեց և այնուհետև իրեն շատ լուռ է պահում, կարծես միտքը փոխել է...

Խեղճ ախշիզը սուս արաւ, ջիբան հանեց եայլուխը, աչքերի արթասունքը թամիզեց, ետով խզած ծեանով ասեց.

Քառասուն երկու տարեկան եմ, բոլոր դաշերը պտտած, ամենամօզնի հագուստներ հագած, ոչ մի ներկայացում, օպերա, ցիրկ և այլն ձեռքիցս բաց չեմ թողել, պատկաների սեղոնին՝ ամեն երեկոյ, ժամի 6-ից մինչև 1—2-ը եկեղեցու մէջ կանգնած եմ մնացել, բայց ոչ մի անգութ մարդ անգամ ամուսնանալու առաջարկութիւն չէ տրել ինձ... Եւ այսօր, երբ միակ ազնիւ մարդ՝ պարոն Սարսաղեանցը խնդրեց ամուսնանալ, ես էլ, միայն, քաղաքավարութեան համար, առաջին անգամ համաձայնութիւն

չտուի և ընկայ խաթաբալի մէջ:

—Շատ բեջա ես արալ, ասեցի իս,—ուզում էր փսակելի, տիւ ալ ասի՝ ես ալ ամուզում, հի՛նչի ես ատկազ անըմ, որ նրա սրտը կոտրելի:

—Ա՛խ... այ Գեօզալ Աղաբաջի, դու պիտի ինձ հասկանաս... Ես դարմացայ, որ նա ինձ առաջարկութիւն արեց ամուսնանալու պայմանով, ես կարծեցի, որ սովորական կատակներ են է տեղի ունենում, մանաւանդ ես վախեցայ իսկոյն համաձայնութիւն տալ, ես մերժելով մտադիր էի աւելի տաքացնել վրաս...

—Լաւ, ասի տեսնամ, հիմի քի եկալ ես իմ կլիխս, ես հի՛նչ անամ, ոչ պարեկամս ա քի քինամ խնթրամ, ոչ ալ սզգականս:

—Ես աղաչում, պաղատում եմ քեզ, Գեօզալ Աղաբաջի, ոտքերիդ տակը համբուրեմ, ինձ համար «Խաթաբալի» մէջ մի գովասանք գրիր, որ պարոն Սարսաղեանը կարգա և նորից առաջարկութիւն անէ. եթէ մի անգամ այդ ծառայութիւնը անէք, միշտ երախտապարտ կըմնամ ձեզ:

—Ես, օրիորթ Պապիսթայեան, ձեր խընթիրքը կըկատարամ, համմա, ասա տեսնամ, տիւք քի փսակեցիք Սարսաղեանի

«Մշակի» Մոսկւայի թղթակից Ոսկերչեանը հեռացել է «Մշակից» սկզբնապահի հետքերի պատճառով. հետաքրքրական է իմանալ թէ ի՞նչ տեսակ սկզբունքներից:

Անսկզբունքային սկզբունքներից, թէ ըսկզբունքային անսկզբունքներից:

«Հորիզոնի» խմբագրութիւնը յայտնում է, որ ինքը ոչ մի կերպ օրինաւոր յօդուած չի տպել թերթում, մինչև 50—60 հազարը լիովին չստանայ. նրանք ասում են, որ մուսան միայն փողի ուժով է գալի:

«Սուրհանդակի» հրատարակիչ պ. Գէորգ Զիլինգարեանը այս օրերում մտադիր է մի ժողով հրաւիրել, և թերթի հրատարակութիւնից ստացած ղիվիդենտը, որ հասնում է մի քանի տասնեակ հազարի, առաջարկելու է որևէ բարեգործական նպատակի յատկացնելու համար:

ՆՈՐԵԼՈՒԿ ՊՕԷՏԻ ՍԵՐԵՆՆԿԱՆ

(Օկարինոյի ներդաշնակութեամբ)

Դուրս եկ, իմ Կեկել,
Տես սիվ է եկել
Այս ջինջ լուսնի տակ.
Տես սիվ է կանչում
Քեզ թաւ կանաչում
Փարելու մենակ.

Իմ նազիկ մեխակ,
Դու իմ որբ սոխակ,
Սէգ Աստուածուհիս,
Փեշերքիդ իւրթկոտ
Խշիւնին կարօտ՝
Հիւծում է հողիս:

հեանան, քու Փամիլաթ հի՛նչ պէս ա կիրուռլի:

—Շատ պարզ է, Գեօզալ Աղաբաջի, եթէ նա, այսինքն իմ ամուսինս, պիտի Սարսաղեան ազգանուն ունենայ, ես էլ Սարսաղեան պիտի գրեմ:

—Շատ լեաւ, երկուսներթ ալ մին ջուռա Փամիլի արժանի էք և ես անպատճառ ձեզ կըփսակամ:

Տեսա, քի ախմախի ախշիզ ախմախը ոտը շատ ա լեանդ անըմ, մտկժը կայալի խօսի, ասեցի, ախշի, ես բալ եմ քինալու, վախտ չունամ, տեսնըմ ես սարքըմ ամ, քինա ետով կըկեսա ալի կըխօսանք: Աս խօսքերաս ետով ցէքս պաչեց տիւս եկաւ: Համմա մին ալ տեսայ, հեալա քիւչի տոււնը չի հասած, ալի ետ եկաւ:

—Ես մոռացայ ձեզ մի կարևոր բան յիշեցնել,—ասեց նա նես մտնելով.—դուք շատ գեղեցիկ էք կապել կորսէտը, բայց կորսէտի համապատասխան չէք սարքել երկրորդ մասը, կուրծքը շատ բնական է, իսկ ներքերը ոչ:

—Ախշի, կլօխ չամ ընգնըմ, հայերան տաւ:

—Ես հայերէն եմ խօսում,—ծծաղելով ա-

Նամակիդ մէջ թաց
 Լաթում փաթաթած
 Մաստակը գաայ,
 Կախել եմ շուրթէս,
 Մօնօգրամմի պէս.
 Ե՛կ, տես հաւատմայ:

Տուն ու անկողին,
 Արտալա—օղին,
 Թողել եմ իզո՛ւր.
 Քեզ մօտ եմ եկել,
 Տեսնելու մէկ էլ,
 Ա՛յ իմ սէր ու սո՛ւր...

Բողկեր եմ կերել—
 Քեզ զոհարերել
 Նինջս խաղաղիկ,
 Քսակ ու «բայց»—եր,
 Կայծեր ու այծեր,
 Ա՛յ շաղիկ—մաղիկ...

Դէ, երբ պիտի գաս,
 Ա՛յ դու օյինբազ.
 Տանս կեանք չկայ.
 Թէ չէ կըբոչեմ—
 Քաղբից կըկորչեմ,
 Աստուած է վկայ:
Մարիկ



սեց նա,—կուրծքդ լաւ է, բայց տունդիտ
 բարակ, այ, այս երկու փոքրիկ բարձերը
 աջ և ձախ կողմից կապիր, իսկ փորիդ մի
 շալ փաթաթիր, այն ժամանակ հրաշալի
 կըլինի:

Աս վարսը կտրուած ախշիզը մին ալ դա-
 րեաս հանեց, իւպկաներս քաշ քիցեց, եր-
 կու բաւաջա բալիշները կոխքերաս պինդ
 կապեց, իւպկաներս թեազադան քաշեց,
 դարիաս կէց տաւ, ետով մին ֆայտօն ալ
 կանչեց դիւզ քշել տաւ «Արամազդի» կօն-
 տօրի մօտ: Ֆայտօնչիին ասեց «օստօնօլի»,
 Ֆայտօնչին կաննեց: Երկու հոքի մտանք
 մին տուննան նես, շէյցար ապերը մեզ
 համեցէք արաւ, մտանք մին գալ:

Քեասպար ջան, լեաւ լսիր, գալ հինչ
 գալ... ես հեալա աթանայ պաներ շամ տե-
 սալ, չորս քսան իննը տարեկան կնիգ ամ,
 մին սիւրբի արախերք ամ թաղալ, բեղերը
 բուրմա-բուրմա նշանած ամ հողի տակին
 տիրալ, համմա սս գալը քի մտա, չիմ
 մտկաս թուա:

Աս գալը շամախեցի Ամիրով Ռստամ ա-
 պերի պարիկմախերսկին ա, հայերան կա-
 սան դեալաքխանա: Չորս կոխքը հէյլի,
 երկու տուն, մին տեղ կնանիք ախշգիրքն

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն
 — Արշակ, սպասիր, սպասիր էլի ին
 ես վագում. պատմիր ո՞ւր ես գնում:
 — Զարմանալի մարդ ես, եթէ ժամա-
 նակ ունենայի պատմելու էլ չէի վագիլ
 այլ հանդարտ կերթայի:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀԱՐՑ

Պարոն «Սաթարալա»

«Գիծը մի քար ձգեց ծով, հարիւր խելօքներ
 չեն կարողանում դուրս բերել այն»
 (Ժողովրդական առած)

Անցեալ կաթողիկոսական ընտրութեան,
 դուր մի անգամ ասեցիք, որ աշխարհական
 կաթողիկոսացու էլ կարող է լինել և անա
 հիմիկս, այդ միտքը ոչ թէ օտարտի չի
 թոււմ, այլ անգամ կաթողիկոսական գահի
 պրետննգիաներ են երևան գալիս:

Պարոն Գրիգոր Զալխուշեանը, որ հա-
 բուստների անունները տէրունական ա-
 դօթք՝ «Հայր մերի» հետ էր առաջարկում
 կրկնել և սրանց անուններն էլ աղօթել, և
 որին դատարկագլխի մին առաջարկում է
 կաթողիկոս ընտրել—նոյն այդ Գրիգոր
 Զալխուշեանը սկզբունքով համաձայնում է
 կաթողիկոսացու աշխարհական ընտրելուն և
 օրէնքի տեսակէտից ոչ մի արգելք չէ տես-
 նում:

Ռուսաստանում օրէնադիրներ էլ կան:
 Ռուսաստանում «նօտարիուս»-ներ էլ կան:
 Ռուսաստանում եպիսկոպոսներ էլ կան:
 Օրէնսգէտ Գրիգոր Զալխուշեան, նօտար՝
 որ կազմում է ազգային բարեբարներ կը-
 տակներ, եպիսկոպոս՝ որին կարող ես վերց-

ցրու և՛ կաթողիկոսական թիկնաճուռ էլի
 իմը կուգես մատնանչի՞նք—ՊՈՒՄՅՅՅ
 Անցեալ օրը ես՝ պարոն Արդարեանս
 սկզբունքով համաձայնելով իրաւարան Մե-
 դաւորեանի հետ, «որ ամեն մի՛ հայ եկեղե-
 ցու զաւակ կարող է ընտրել կաթողիկոս»
 առաջարկել էի յետ այսու՝ կանանց ընտրել
 այդ վեհագոյն կոչման համար:
 Պատճառարանութիւնները բերել էի:
 Մի քանիսն էլ ուզում էի յետագայ յօդ-
 ւածներով մատնանշել:
 Եւ ի՞նչ...
 Ֆիասկօյի հանդիպեցի, որովհետեւ ասե-
 ցիք՝ մի շարք ի նկատի ունենալովներ...
 և այդ ի նկատի ունենալովներով այնչափ գը-
 լուխս լցրիք, որ քիչ մնաց ես ծրագրիցս
 դուրս գայի և կաթողիկոսական հարցի
 առթիւ մտածելուցս, Մուխրանեան կամուր-
 ջի բացման օրը, ուզեցի վարարած գետը
 նետէի ինձ:
 Այն ժամանակ ես իմ մտադրութիւններս
 միայն ջրի կոհակներին և չաղացած լոքա-
 յին կասէի...
 Մակայն ես այդ բանը չարի, քաջ գիտե-
 նալով, որ զաղափարները այդպէս շուտ
 չեն հասունանում—ինչպէս մրգերը և մաս-
 նաւորապէս սրանցից թուփն ու կեռասը:
 Թիցի նոյն իսկ շինում են օղի, քացախ
 և այլ բաներ:
 Հէնց այդ մտորմունքների մէջն էի, երբ
 Զալխուշեանի սկզբունքային յօդածը կար-
 դացի:
 Եթէ նա համաձայն է, որ աշխարհականը
 կարող է կաթողիկոս ընտրել, ուրեմն ու-
 զում է և իր կաթողիկոսական թիկնաճու-
 թիւնը դնել:
 Դա հասկանալի է:

փսակած դստ կնիգ իրամ:
 Քեասպար ջան, հաւատա տասը ստօլներ
 կար, չիմի վերայ ալ կնանիք նստած, մինը
 վեր ա կանըմ, մինը նըստըմ: Բարիշնա
 դալլաքը եայլուխս ուզեց, ես տւի, վերայ
 դուխի ածեց, ետով ինձ կաննացունիլ տը-
 ւաւ, չորս եանաս դուխի փիչեց և կլօթ
 տալով սաղաթի պէս կաննեց առաջիս: Օ-
 րիորթ Պապիսթայեանցը պօրտմանէթը պա-
 ցեց երկու դանա նիկօլայ մանէթ տաւ
 կասերշին, կէս մանէթ տաւ բարիշնա դալ-
 լաքին, մին արասի շէցարին, ետով տիւս
 եկանք:

—Գեօզալ Աղաբաջի, իւր պիտի դնաս,
 ինձ էլ տար հետդ, կամ դու ինձ հետ եկ:
 —Շնորհակալ ամ, աս քիշեր սատանան
 ալ իմ տեղս քիթանալ չի կարիլ:
 Դիւզ քիշերայ սայաթի 9-ին, «Ով խա-
 թարալների Աստուած, դու ինձ կարողու-
 թիւն տուր, որ Կալատուղօվեանի հրամանը
 կատարամ» ասելով՝ ընկայ Սոգոմ-Գոմոր
 Բաքւի քիւշաները:
 (Ալի կիլի)
 Մնամ քեզ թամարզու քու քիւրացու՝
 Գեօզալ Աղաբաջի

ՅԵՐԱՅԱՍԻՄԱՆ ԳԵՂԱՐԻ ԳԵՂԱՐԻ ԳԵՂԱՐԻ

Ո Ի Խ Տ Ա Ի Ո Ր

Չէ, էտ չէ բանը. հիւնդութիններն ել մօզաին էլի:

Հիմի գլխասպանութիւնի մօզա է, ով ասիս գլուխը սպանում է,—ան քացախ է խմում, ան գործու ջուր, ան լիմոնադի կիսլատա, ան ճանջիարադ, ան լէվոր է խփում, ան խանջալ, ան չանգալ ու ասիդ է կուլ տալի, ան կուրսնուսն է կախում, ան ոտաց ճամփում, ան կրիշում, ան բաղում ու ըլում է վաւր Քուռի մէջ էլ ին նընգնում, ջուրը մոտրում:

Մեզնում, գիղիք ով ինչ թաւուր կու նընգնի էտ հիւնդութէնի մէջը:

Նիկօլ Չիգիանովը, վուր իր գլուխը սպանելու համա ջափա քաշէ, գինու պաղաւտումը կու մտնի, ուումբի ձերից կապած թոկը կու գթնի, էդով կու խեղդուի:

Տիգրան Նազարովը կրիշա կու բանձրանայ, իր իրիք միլիօն ու չէթէր կրիշաներուցը թելիւրը կու հանի, թոկ կու շինի, ու կու խիղդուի էտուրով:

Քալանթարը էտ ջամփին կանգնած վուխտը, կեհայ Ղարաքիլիսա ու էծերի համա կալերին կապած թոկիցը գլուխը կու գցի՝ էնինց կու խեղդուի:

Ատրպետը նաւթի օրմէքի մէջ կու նընգնի:

Մակար Չմշկովը Հալէյ աստղի պոչից կու բաշէ:

Օխանէս Թումանովը առաջնուրթող գրելիս, դալամով հետտի կու խփի իր գլխին, վուր տեղնուտեղը բան հոքի կու դառնայ:

Տիգրան Յովհաննիսեանը Արտիստուլիումը, Մանթաշեանի լոժիցը կախ կուլի:

Ճիրվանգադէն բաղնիս կեհայ ու էնդի մէ փաթերակ կու բերի գլխին, հաուգի մէջ կու նընգնի:

Էփրիմ Մատուրովը Քուռը կու նընգնի. մի քիչ լող կուտայ:

Ու էտինց շատիրը:

Համա թէ խօսք էլաւ իմ համա, զուրթ վուր ասիմ՝ իս ջէր չիմ փիքը արի թէ՛ ինչ կօնիմ, համա չուքի էդ մօզէն է՝ անձնասպանութիւնն է մնացի, վուր ջէր չիմ նընգի, էտու համա էլ իս էլ անձնասպան կուլիմ, իփ վուր տեհնում իմ, վուր չիմ մեռնում—ու էդ էնդուր ուփրօ, վուր տեհնիմ թէ իմ մեռնելուց յիղը, ով վոճնց կու լաց ըլի, ինչ ճաւեր, ինչ խօսքիւր կու խարջիւն, վուրդանց ինչ դեպէշ կու զրգիւն, ով ինչ քարոզ կու խօսի:

(էլի կուլի) Գասպար Կալասուզով

Գարուն, մայիս կանաչ ամիս, ձեռք բռնեցինք ես ու Մամիւր Ո՛ւր ենք գնում—ես չգիտեմ. փոքրահասակ ու անմիտ եմ: Կամաց ելանք լեռը բարձր, որ ծածկել էր մէզը թանձր: Լեռ ու հովիտ հագել հովը, թուխալ էր նստել սրբի քովը: Հա գնացինք, օրը բացւեց, փուսն հեռացաւ, հաւէն պարզեց: Հե ու հեռած հասանք վերը, դողդողացին մեր ծնկները: Մամիկ թոռնիկ մի քիչ նստանք, սառն աղբիւրի քովն հանգստանք: Մէկ էլ տեսնիմ սրբին մօտիկ, չա՛րսու, բա՛զար ի՛նչ խօրօտիկ: Խնձոր ու տանձ դեղձ ու ձիթան, կաղին նօխուտ քիշմիշ Իրան: Կըլըռում են, հա ծախում են, փողը առնում բղաւում են: Իսկ ամբողջ սրբի գուռը, ծեփ պատել են սուրը մատուռը: Հա նայում եմ, հա վեր, հա վար, դեռ գալիս են հարիւր, հազար... Որը ոտով, որը իշով, բեռնած ճուղի՝ որն էլ փէշով... Հա գալիս են աղջիկ ու հարս, միջնավար կին ու ճերմակ վարս: Մեծ ու պզտիկ մանր խոշոր, որ թնդացնեն էդ սար ու ձոր: Սրբի դուլը ու տէրտէրը, դրանք են մատուռի տէրը: Մատուռի մէջ գլուխին բաց՝ ամեն մէկը մի կողմ կանգնած. Զօռ են տալիս մոմի բոցին, տարւած դրամի զնկոցին: Խնկամանը թիթեն ածուխ, լցին փչէն լաւ խնկան ծուխ: Խնկան ծուխը վեր ծառացաւ. Բեատակն էկաւ թառթառացաւ... Տէրտէրն իսկոյն նրան ճանչեց, ձեռքից բռնեց առաջ կանչեց: Մեր դու Մհօն դառաւ թարգման. ընկաւորեց, պատմեց շատ բան... Քեատակն ընկաւ ու խոխուած, փրփրակալ ու մրմնջած... Մէկիկ մէկիկ Մհօն լռեց՝ խաչակնքեց ու սկսեց: —«Ահէք Աղէն ինչ է ասում. քեատակն այսօր բաց է խօսում: Աղէն կասէ. «Գեղը քարին, ցաւ կըղրկեմ ես տաւարին... Թո՛ղ ժամ անն սասման համար, ցաւը կառնի շուտով դադար: Աղէն կասէ. գեղը ձորին, կարկուտ բերեմ վարդաւորին... Մատաղ բերեն մի թուխ ոչխար, դրկեմ կարկուտը դէպի սար: Աղէն կասէ. մի մարդ կայ վատ, ես կըպատժեմ նրան շատ շատ. Սրբութիւնս նա հերքում է, չի հաւատայ անարգում է. Պիտի դնեմ շնքին սուր, գլխին թափեմ կայծակ ու հուր: Ահէք թող գայ ընկնի ոտս. խնկով, մոմով նստի մօտս, Նրա մեղքը ես կընրեմ, քանի որ մեծ ոյժի տէր եմ...» —Մհօն պատմեց ու կանգ առեց, և ամբոխին սառսուռ տիրեց... Ու հեղեղին թափին արծաթ, ոսկի մանեակ շատ ամանաթ... Արձանի դէմ փողը դիզեց, տէր հօր սիրտը, խոռ էր, դզեց: Գարդոտ հարսներ դեռ լալիս են, դրսից անվերջ հա գալիս են... Ու սրբի դէմ ծոռում են ծռուկ, մուրազ խնդրում ու ծխում խոռնկ... Երկրպագում, Ձերմ աղերսում...

Միւս կողմը մէկը մէկին, ման է գալիս հին ընկերին: Հեռու գեղից իրար ծանօթ, անոյշ համբոյր քաղցր հոտ հոտ: Ու կարօտով սիրով խօջ բէշ, փոխ փոխ մրգեր կըտան փէշքէշ... Շատ ֆացիկնք մատրան ներսը, բռնի մամիս քաշի դուրսը: Արև է, ջինջ շողքը պայծառ, կըհուրհուրան հովիտ ու լեռու: Քանի տեղով դափ ու զուռնայ, կըձեւան ու զիլ կոռնայ: Տեղ տեղ բռնած հարսները պար, ձէներն անուշ խաղի յարմար: Գովան թուխ աչք սիրուն Մէհրի, սարու քարերն էկան սէյրի: Աղջկները շարան շարան, մատաղ կուսանք եօլաշ ետրան: Կանչին ազատ ու մղմղան, իրանց քէֆով պար կըխաղան: Մի քիչ հեռու տղայքը խառ, կըթուչկոտին աշխոյժ կայտառ: Կոնծող դասն էլ իրանց կարգով, խումբ խումբ նստած բոլոր շարքով. Հերթով յիշեն խմեն կենաց, չի ճանաչելի զգաստ հարբած... Խօսքով սուրբը վայրի դուզ է. թմրած մարդու սիրտ կըլուզէ: Թաւիշ մախմուր մարգ ու ափը, կանանց ցնձին կուտաւ տափը: Հարս ու աղջիկ հագուստ պահճուն, հազած կարմիր նարինջ փայլուն, Ալվարդ մաւի սև ու ճերմակ, շող շող գունով հազար տեսակ... Մաղկունք ծաղկանց հետ միասին, խաղցան պարին եայլի ասին: Կազմին դրախտ, չքնաղեթեր, հրապուրիչ ու կենսաբեր: Արևն իջաւ կէսօրից ցած՝ հարս ու աղջիկ նստան դադրած:

Բերին բողջէն, բացին կապոց, խաշած հաւկիթ, հաւի տապկոց, Ընկեր ընկեր կերան անուշ, ու համբուրին միմեանց թուշ...

Ոտքի ելան
Ընկան ցրիւ,
Մուրազները՝
Առած լրիւ...

Մովսէս Դովասեանց

Է Ն Յ Ի Կ Լ Ո Պ Ե Դ Ի Ա

Գ.

Գ-ն հայերէն այբբենի երրորդ տառն է, իսկ չինարէնի՝ չորրորդը:

Գաւազան.—Մանկավարժական գործիք:

Գասպար.—Նաղշքար մարդ, որ ներկում է Բօտտերի կամ Շլինգի վրձինով:

Գետ.— Սիրահարածների և կեանքից զզւածների գերեզման:

Գող.—Գաղտնի արհեստ:

Գինի.—Գծերին խելօքացնող և խելօքներին գժւացնող հեղուկ:

Գանգ.—Կոտոր մարմին, որի միջի նիւթը շատ մտածելուց լայնանում է, իսկ խելքին զօռ տալուց՝ սեղմում:

Գուլթան.—Մի գործիք, որ ամենից շատ հոլովում է զիւղատնտեսն ու զիւղացին:

Գիրք.—Պարապ վախտի խաղալիք, դրա հայերէն տեսակի 99 տոկոսը սպառում է Սօլօյակի հայերի մէջ:

Գրիչ.—Խոփածակ, սրածայր գործիք, որ իր աջ ու ձախ շարժումներով մէկին բօյախանի կարան է կոխում, իսկ միւսին՝ շիւլափլաւի պղինձը:

Գիժ.—Ասում է 75 աստիճան տաքութիւն ունեցող մարդկանց:

Գուլթ.—Բնաւորութեան մի տեսակ, որով

կարող էր պարծենալ գթասիրտ Աբղիւ-Համիգը:

Գերուլթիւն.—Սօցիալիստների պահանջը:

Գերանդի.—Հունձ անելու գործիք, որ մեծ ծառայութիւն է մատուցանում համաճարակի և ուպրաւայի քնած ժամանակ:

Գինետուն.—Ժողովարան, որտեղ ներս են մտնում ուղիղ քայլերով և դուրս գալիս զիզզազներով:

Գանձ.—Հարուստների սրտի խոց, որ առողջանում է մահւան մահիճում կտակներ գրելիս:

Փարեմուզ



Յ Ա Տ Ե Ր Ի Յ Մ Ե Վ Ը

(Ուրանկար)

Նա սևահեր է. աչերը յառ ու խղճուկ, հազուստները ծաղկազարդ: Ապրում է մի անշուք սենեակում—ուր արևի ոչ մի շող չի թափանցում: Վրանածակ ճերմակ վարագոյրների տակ՝ դրւած է նրա օթոցը—ևրոպական մահճակալի ձևով զարդարած իսկ օթոցի տակ—մշտապէս տեղաւորւած են կոնքն ու դոյլը. բարձերի վրայ կարմիր

թելերով հաթթակարւած է մի հնկայական ծուռը թագ և տակը տանկիս [AM...]

Օթոցին մերձ՝ պատկերով թիւնքի ձգւած են հապօնական նեղ խորիկներ, որոնց վրայ գամւած են AM-ի զանազան լուսանկարները ընդհանրապէս ցրիւ վարսերի ձոխ փունջը, ուսի վրայով ձգած դէպի կուրծքը, մի տեղ տղամարդու գլխարկով, ծխախոտը բերանին, միւս տեղ՝ շարմանկան շայկած, սրիկաների հետ գինի կոնծելիս...

Խորիկների տակ—տեղաւորւած է արդ ու զարդի սեղանը, վրան՝ հայիկին, ճրագը՝ կարմիր պուտածէ թղթէ լուսամտիփող, դիմազարդի մատիտներ, օժանելիք, շպարի ալ ու ճերմակ փոշիներ, անուշաբոյր ջրեր, արդէն կարգացւած նամակներ հրէշաւոր սխալներով հասցէագրւած, իր մատանիներն ու բորոցները... հայելու անկիւնի մեխից կախւած է իր մետաքսէ գուլպայի մի հատը, կիսով չափ լի խոշոր թղթագրամներով ու արծաթէ բուրլիանոցներով:

Խորքում դասաւորւած մի այլ սեղանի վրայ դրւած է՝ հեշտովառ կասկարան ու նրա վրայ մի պղնձէ շուրթը կոտրած թաս, որի մէջ միօրինակ ու տաղտուկ ձոյնով աթժում է խոզապուխտի մանրէների հետ եփուղ ձևի զանգաւածը. նոյն սեղանի վրայ են դրւած և երկու խեցատներ, որոնցից մէկում՝ ծաղկում են մի քանի անհոտ ծաղիկներ, միւսում՝ մանրատերև ալեանդրան:

Սեղանից վեր, երկու պատերի անկիւնում, հէնց առաստաղի տակ բազմեցրած է մի ծերուկի Փանտաստիկ պատկեր, անտառի մէջ ծնկաչոք մի արջի կերակրելիս. պատկերի առաջ վառւում է ջահը, իսկ յետևը երևում են փոշոտ ու չորացած ուռի-

Փ Ե Լ Ի Է Տ Օ Ն

ՊԱՐՈՎԱԿԻՐ ԲԱՔՈՒԱՆ

«ԿԱՐՄԻՐ ՍԵՆԵԱԿ»-ներէից

Իմ ազիզ խալաֆ ախպրացու և «Պաթաբալ» սուրբի կուսակցութեան դեաստարաշի Բեասպար Կալասուզովեանցի՝ մին ֆըր-զն շատ պարով շամախցի տիկին և Բաբել կնանիքոնց և տիչիգըրոնց ապեկունշա այլի

Գեօզալ Աղաբաշից

Բ Ա Պ Ո Ր Տ

I

Բեասպար ջան!

Հիտի փոշոտով հրաման նամակը սաղ սալամաթ ստացայ, կարթեցի, խէյլազ մտքի տակ ընգայ, տերևողորմեան վեկալայ ցէքս, իրեք անգամ «խէր, շառ, Աստօձ» արի: Ետով սանդուխս պեացեցի, հերու չէ մէկալ տարի՝ Կիսաւօղսկի դաշմը առած մօզնի շորերս սարքեցի, թեազա դեարիաս, որ ձեր

Թիֆլիզի կինտօի և Ստամբուլի սալաթի շարւարին ա նման, չիւնքի ներքը շատ նեղ ա, նա ալ հազրեցի: Դազանի սայրունով երեսս մին լեաւ լացայ (իրեսթ սև իլի, Բեասպար ջան, փող չունամ ետիչնի սայրուն առնամ), առաջ-առաջ կեցեցի դեղին շոկ իւպկաս, տակը մին քիչ երզան արի, նրա վերեան կեցեցի ալի շօլօվի բեադրանդ իւպկաս, տական մին շարք լենուլթունի նախշուն կրուժուա կարած, իրեքինջին ողողվի ալի շօլկի իւպկաս տական չեարաքիկէս լէն կրուժուա տիրած. իւպկաներս քի պրծաւ, զապիսկի կիրեցի մադամ ու տիկին Դինջուրմազեանցին, նրա կօրսէտը պերել տի: Կօրսէտ հիւնջ կօրսէտ, սան օլասան, Բեասպար ախպրացու, անքան մեծ էր քի, լափ մին մէշօկ կարտօֆիլ կրտաներ մէջը:

Կօրսէտը անց կացրի մէջքիս տեսայ շատ լէն ա, ընդնըմ ա ոտերիս վերայ: Խաբար խրկեցի տիկին Դինջուրմազեանցին, կանչիլ տւի, նա ալ եկաւ:

—Տիկին,—ասեցի ես,—ես քեզ Բաբասիի օփշի համամը լրանիլիս տեսալ ամ, տիւ ալ ինձ պէս հասուլթունի, իմ պեարագլթունի կնիզ իս, ախր աս կօրստը, որ տիւ

կապըմ իս քիզ վերայ լեաւ ա նսալմ, համ-մա քի ես ամ կապըմ՝ փորաս ալ ընգնըմ ա ոտերիս վերայ...

Տիկին Դինջուրմազեանը ուխը մին արջին պեացած մին պինդ շախկարա տւաւ, անքան պինդ, որ պեարանան Փալշիւի ա-տամները թափեց:

—Այ Գեօզալ Աղաբաշի,—ասեց նա կիրափառ լիւղիով՝ նախ քան կօրսէտ կապելը, անհրաժեշտ է մէջքդ, կուրծքդ հաստ շօրով փաթաթիլ, հաստացնել, այնքան փաթաթել, որ հասնէ կօրսէտի լայնութեան. երբ կօրսէտը կապեցիր և տեսար, որ պինդ է, այնուհետև մաքուր իրեք ֆունտ բամբակ առ, այդ բամբակը լցրու ձծերիդ տեղը դուրս ցցւածի մէջ և այն ժամանակ ամբողջ Բագուն ոտի տակ տաս, աշխարհի երեսին ինչքան եղանակով պարես, էլի վայր չի ընկնի:

Ես աթանց ալ արի: Ետով իւպկաներիս վերեան կիցեցի պիւլուշօվի դեարիաս, եղով դարանները երզան, կանանջ իրեսով բաշմակիներս: Հեանց նոր պրծալի, տեսայ մօտս եկաւ օրիորթ Պապիսթայիանցը և ասեց թունթ հայերան խօսքերով:

—Գեօզալ Աղաբաշի, մարդ կայ, որ բա-

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



—Ա՛հ նիկ, գիտես թէ իշտան ունէի, կարծում էի թէ Մանթաշուլը ինձ էլ պէտք է բան կաակէր:
 —Քեզ ի՞նչի պիտի կաակէր է:
 —Ի՞նչպէս թէ ինչի, բան ես թիֆլիսեցի չեմ. ես մարդ չեմ, նս կայ չեմ:
 —Ինչ անենք, որ դու ես:
 —Բա իս էլ էդ իմ ատում է: Գէտք է, որ ինձ էլ կաակէր. իս էլ մի ճառ կատէի, թէ չէ հիմի ինչ է:



ԿՏԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ

Դ. Մարագեան.—Ինչ էիք ցանկանում:
 Թիֆ, քաղ. վարչ.—Ուզում էինք իմանալ թէ մեզ ինչքան է կաակել մեր մեծ բարերարը մեր պատք ու պարծանքը:
 Դ. Մարագեան.—Ձեզ—ձեզ ոչինչ. ձեզ ինչի է:
 Թիֆ, քաղ. վարչ.—Ի՞նչպէս թէ, ի՞նչպէս թէ ոչինչ. այդ դէպքում մենք դեմոնստրացիա կանենք. կըվարկաբեկենք. ազգին աւրիս է իսկ մեզ չի տալիք. այդ ինչպէս կարելի է:

Դա պարզ է:

Եթէ մէկը մի որեէ սկզբունք է պաշտպանում մեզանում, նոյն իսկ ամաշկարայ սխալ սկզբունք, փորձերով գիտեմ, որ դա ոչ թէ ի խորոց սրտից» բղխած մտորմունք է, այլ՝ կամ անձնական և կամ բարեկամական կապերի պահպանութեան անհրաժեշտ ֆունկցիաներ:

Արդ՝ այդ ամենը ի նկատի ունենալով՝ ես կարող եմ այլևս հանդուրժել և պատեւելի «Սաթաբալայից» ի նկատի, ի նկատի, ի նկատի պատմաբանութիւնները ի նկատ առնելով՝ ինքս էլ իմ գաղափարը չյայտնել, չտարածել, չքարոզել, չհամոզել:

Ես ասում եմ՝

Եթէ պարուններ իրաւաբաններ և տէրտէրները կարող են հաստատել, որ կաթողիկոսը կարող է լինել և աշխարհական, ապա ուրեմն ես էլ հաստատում եմ, որ աւելի լաւ է եթէ լինի այդպիսին կին մարդը:

Փառք Աստուծոյ մեր գործիչ կին մարդիկը աւելի լաւ ու անբիծ անցեալ ու գործունէութիւն ունեն, քան թէ բոլոր աշխարհականները այլև մի քանի եպիսկոպոսներ և մի առած:

Ես ասում եմ՝

Եթէ պ. Գրիգոր Չալխուշեանը պիտի կաթողիկոս լինի, որը ազօթքների մէջ պէտք է և հարուստների անունները յիշել տայ և այդ պարտադիր անէ, աւելի լաւ է եթէ մի կին կաթողիկոս ընտրենք, որը երբէք այդպիսի անհեթեթ և միաժամանակ հակահրապարակախօսական, հակա-տրամաբանական, հակա-բարոյական միտք չի յայտնի:

Ուրեմն,

Ես գալիս եմ կրկին այն համոզման, որ կին կաթողիկոսացու ընտրելը ըստ ամենայնի նպատակայարմար է. ուստի և մնում եմ նոյն կարծիքի մէջ հաստատ ու անդրդուելի:

Արդարեան

ՄԱՅՐՆ ՈՒ ԱՂՋԻԿ

— Չէ, զատկա, չէ՛ ես համաձայն չեմ լինի, եթէ դու Միխայի կինը լինիս, նա ի՞նչ մարդ է. օրինաւոր տղամարդ կտրուէ է՛:

— Նրան ի՞նչ է պակաս մայրիկ:

— Ի՛նչպէս թէ ի՛նչ է պակաս. ընդամենը մի ութսուն ըրուրի ոտնիկ ունի. ութսուն ըրուրի ստացողը օրինաւոր կրկինի՛:

ՀՆԱԳՆՆ ՔԱՂԱՔԻ

ՆԱԳՆՆ ՈՍԱՆՆԱՐՆԵՐԻՑ

(Ուղեւորի պօքսճեկից)

Քաղաքում շատ փողոց կայ
Դասպարի բեկերը վկայ՝
Բոլոր փողոցների մէջ,
Յ եկից բացի—բան չկայ:

Ունին-չունին մի դպրոց,
Շինել են անկեղանոց,
Անշնորք վարժուհիներին—
Սաղացելու լաւ միջոց:

Մեր Լեւոն վարժապետը
— Ինչպէս Նոյ նահապետը
Խմել—կոնծելուց բացի—
— Տար գցիր վարար գետը:

Քաղաքում կայ շատ աղջիկ,
Աղջիկ ասեմ—ի՛նչ աղջիկ.
Բոյերը կարծ—համադաս...
Գիւններին ալրի մէլդան,

Կլասն Յակովբ

ՅՈՒՅԱՆԱՆԻՄՈՒՄ

— Ի՛նչ արժէ այս մերկ կնոջ արձանը:
— Երկու հազար ըրուրի:
— Այ՛ թէ ի՛նչ: Սա դեռ մերկը այդչափ արժէ, իսկ եթէ հազանէք զուգէ՞ք, կրկնակի կարծեմայ, չէ՞:

Զ Ր Ո Յ Յ Ն Ե Ր

— Ե՛հ, մայրիկ, քեզ չկարացի բան հասկացնելու
դուն էլի քո էջն ես քշում:

— Բա սոց անեմ, այ որդի. դուն իմ էջն ես, ես էլ քեզ քշում եմ:

— Հի՛նչս մտթոյ կախալ, երևում ա դեռդոս
ըս. ասա, դեռդոյ ի՛նչ ա, ես ճար անեմ:

— Ներեցէք, տիկին, ես հնացած գեղեր չեմ
գործածում:

Ն՞ քաղաքի քաղաքազուխը.— Ձեր հայրն իր մեծ
կարողութիւնից ոչինչ չէ նւիրել քաղաքին. ի՛նչքան
կրտաք, որ մեր քաղաքային զարչութիւնը պատէ
ձեր հօր յիշատակը:

— Հարուստի որդին.— Դուք ի՛նչքան կրտաք, որ
ձեր յիմար հարցին պատասխան չտամ:

— Ձահել վարդապետներն էջմիածնապետական
այգում լաւ քէֆ էին անում: Պար ըրորսած և «Հայ
նազանըմ» ուրախ ուրախ երգելով, գամից նա ըզուրս
թողած գիծ հորթի նման վեր-վեր էին ցատկում:
Պարզներից մէկը հանաքով բացակասչեց.— եղբայր-
ներ, գի՛տեք, որ մեր կաթողիկոսը սրբատու կոն-
դակով թոյլ է տւել մեզ, ամեն մի ցանկացողին, ա-
մուսնանալ: Այս լսելով՝ նրանցից մէկն ընկաւ գետ-
նի վրայ ու սկսեց կողկողալին լալ-արտասելը:

— Այ մարդ, քեզ ի՛նչ պատահեց, որ ուրախա-
նայու տեղ այդպէս դատնաղին լալիս ես:

— Վախենում եմ սուտ դուրս գայ, պատասխա-
նեց ջահել վարդապետը:

— Բարև ձեզ, պ. Նազարեանց:
— Ես Նազարեանց չեմ, ներեցէք:
— Տիգրան Նազարեանց:
— Ոչ էլ Տիգրան...
— Վահ, ինչքան նման էք...
— Ի՛նչ իրաւունք ունէք ինձ վերաւորելու,
պարոն:

Սերամտէս



Ն Ա ԵՒ Ն Է

(Վէպի Վահրէք) ԵՅ՝Ո
ՅՈՅ՝ՈՐՈՍՅՅ

— Ես սիրում էր ներան.
Նէ չէր ասում նրանս—

— Ես ոսկի չունէր, բայց սիրող սիրտ
ունէր.

Նէ սիրել չգիտէր, բայց ոսկի ունէր.
— Նրա աչքերը խաղաղ էին—առաւօտեան
ազօթքի նման.

Նէրա կուրծքը ալեկոծած էր, որպէս կա-
տաղի ծովի հսկայ ալիքը—

— Ես երգում էր.
Նէ խօսում էր.

— Ես կոչում էր ներան—«Երկերուհի».
Նէ կոչում էր նրան—«ամուսին»

— Ես հանդարտ էր երկնի կամարի նման
իր մանկական խիղճու սիրով.

Նէ գեղեցիկ էր, երբ վշտացած էր.
— Ես կեանքում ոչինչ այլևս չէր ուզում
բացի ներանից.

Նէ ձգտում էր հոգովդէպի այն անյայտը,
որին խից իր մի բարեկամուհին.

— Ես երկիրաժողովեան դողող չհամ-
բոյրներով ուզում էր դառամել ու թառա-
մել ներա գրկում.

Նա սուր էր տալիս նրա ձեռքը, վրէժ-
խնդիր լինելու այն ատենի կնոջից.

— Ես առանց հասկանալու, վերջապէս
յեղափոխեց իր հանելուկ աստուածուհու ոճ-
բանիւթ ու աղեքսալի հեկեկանքից.

Նէ նրան ճանապարհ ձգեց հրեշտակային
խոստումներով:

— Ես թողեց ներա փոթորկած լանջին
իր այրական արցունքի ամենաառաջին կա-
թիլը.

Նէ տւեց նրան իր ամենավերջին համ-
բոյրը:

— Ես բանտարկեց.
Նէ մնաց.

— Նրա կրծքի տակ թոքախտը սաղաց-
նէրա սրտի մէջ տնայայտ ու անըմբռնելի
վիշտը խօսեց.

— Ես առապում էր անցեալի յուշերով
իր թերի սիրերգը շուրթերին.

Նէ անհիծում էր այն ուխտադրուժ ան-
յայտին.

— Ես գոհում էր իր գերբնական սէրին.
Նէ ձգտում էր նոր կեանքին.

— Ասում են—Ես մեռաւ բանտում ան-
յուշ, կորաւ նրա գերեզմանը.

Ասում են—Նէ իբր թէ... բայց թողնենք
ես չեմ ուզում հոգուս մեղք բարձել:

Մարիկ

Ի՞ՆՉԻ ՊՈՉԵՐ ՈՒՆԵՆ

— Հայրի՛կ, ինչի կովերն ու եզները պի՞
զեր ունեն. իսկ հորթերը չունեն—

— Պարզ պատմաւորով, սիրելիս, հորթե-
րը դեռեւս ամուսնացած չեն:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԵՏՐԱԳԱՆ ՏՈՒՆ

ԳՐԱՄՄՈՑՈՆ ԸՆԿ.

Գ. Ս ԴՄԻԹԵԱՆ ԷՒ ԸՆԿ.

Թիֆլիս, Գոլովինսկի պողոտա № 6 ժողովարանի տակ.

— Ստաշարկում է նոր պլաստիկաներ —

Բագրատր, Մաչիսր, Չաբար եւ Իսախիլը

3 րուբլու

ՓՈՒՍԱՐԷՆ

2 րուբլիով

ՄԱԹԱԲԱԿ

Կամպիլեմեր

ՇՔԵՂ ԿԱԶՄՈՂ

1906 թ. 5 ր.

1907 թ. 7 ր.

1908 թ. 7 ր.

1909 թ. 7 ր.

1910 թ. 7 ր.

Հին համարները հատով թիֆլիսում

10 կոպ., թիֆլիսից դուրս 12 .:

Գիմել՝ «Սաթարալա»-ի գրասենեակին:

Բ Ժ Ի Ե Կ

Ե. Ի. Միկասեսից

Ներքին և Երեւանից և ստամբուլ-ադիբային հրանդութիւնների, պրոֆ. MATHIEU մասնագիտական կլինիկայից Պարիզում

Ընդունելութիւնը առ. 9—11 ժ.

Երեկ. 5—7 ժ.: Ելիզաւետինական, 39: 100—101

Բ Ժ Ի Ե Կ

ՓԱՆՑ ՄԱՆԻԷՆԵԱՆ

Մասնագիտութիւն ՄԻԶՍԵՌՈՒԿԱՆ, ՎԵՆԵՐԱԿԱՆ և ԿԱՇՈՒ Կրանդութիւններ:

Ընդունում է հրանդներ իր անփառանք ամեն օր առաւ. 9—12 և երեկ. 6—9. Ելիզաւետեան փող. № 28.

00—103

ԼՈՅՍ ՏԵՍՍԻ

ԲԷՆ-ՀՈՒՐ

Վ. Է. Պ

Էրիստոնէութեան առաջին օրերից Ֆրանս. թարգմ. Տիրայր վարդապետ Հրատարակութիւն «Գուտտենբերգ» գրափառառանցի

Գինն է փոստի ծախքով 1 րուբլի Դիմել՝ Тифлисъ, книжн. магаз. «Гуттенбергъ» Г. И. Галустяну.

1911 թ. գրացուցակը ուղարկում է 2 ր Ի 2—2

ԴԵՐՉԱԿ

Ա. ՏԵՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ

Նեկրասովակայա փողոց № 8, Վրոնցովի արձանի դիմաց

Ստացել է մեծ քանակութեամբ արտասահմանեան և Ռուսաստանի ապրանքներ, վերջին ժողայի համեմատ, ընդունում է պատէրներ ամեն տեսակ վերնագրեցանների, կատարում են ամենայն բարեխղճութեամբ և մատչելի գներով: Խնդրում ենք անձամբ համոզուել: 00—35

Первокл. ресторанъ

„АННОНА“

«Здание Артистического Общества»

Сод. Я. Т. Бондаренко

Ежедневно отъ 1½ час. до 5 час. пополудни и вечеромъ отъ 10 час.

до 2-хъ час. ночи. ИГРАЕТЪ КОНЦЕРТНЫЙ АЛЕКСАНДЕРЪ. СТРУННЫЙ ансамбль подъ управлениемъ

Завтраки, отъ 11 час. до 1 час. дня 80 к. Обѣды, отъ 1 час. до 5 час. пополудни: изъ 2-хъ блюдь—60., трехъ—90 к. и четырехъ—1 р 20 к. Кухня Европейская и Азіятская; биллиарды. Имѣются кабинеты; Получены Ростовск. раки, имѣется живая рыба; Отъ жары можно спастись толко въ „Аннонѣ“

52—1

ԲԵՍՏՈՐԱՆ - ՃԱՇԱՐԱՆ

ԴԻԼԻ ՊՈՒՉՈՒՐ

Քաղաքի կենտրոնում, ամենայրմար տեղ թամամշեան բարանսարայի տակ

ՄԻՇՏ ԹԱՐՄ ՄԹԵՐԿԻՑ

— Եւրոպական եւ ասիական-կովկասեան նաւաւուցակ —

Ընտիր ըմպելիներ, զով կարինետ-սենեակներ մաքուր խոհանոց ու պատրաստակամ ծառաներ

25—2



«Հայեր» քերթի մեջ կարգում ենք

«Հայեր» քերթի կողմում են աշխարհի բոլոր ղեկավարները, ինչպիսին Բաժանեան, Շերկանյուզեն, Աժոն և Ազախյանն են, Մեծը որդեկան ախարհաբարը հարկում են Ազախյանին հետևում Հայերին կաշան մեծանուն, բայց հեղձան ու խաղաղ ընդունիլ, և իր ձեռքերն ախարհաբարի- նը որովհե ընկերական դրոշակի սակ, Գորա-Ազախյանը պիտի անկողնի-ս-այդ անպարտած անհրաժեշտ է այդ է պահանջում ընկերան ու խաղաղ հայ ձե- րովորք չունի հայց Օրմանի աջը Բալանում է, երբ նա մտածում է, որ այն հեղձան ու խաղաղ պատերի հետևում փռվելան և իր ձեռքակ հայրը... Ազախյանը որդեկան ախարհաբար խնդում են հետևում Բաժանեան, Շերկանյուզեն և Աժոն կաշան մտածապաշտ դրոշակաձեռները և իր սանը հան- դես նստելու Մեծը չեն խաղաղ ոչ պի, նոյն իսկ մեզ դրոշակա խաղաղ, կեն ընդհանրական շահ այդ պահանջը. հետագայում հայրիկ-Ազախյան, այդ դրոշակա զինվորները...